ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ

ԸՆԴԵՐՔԻՑ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻՑ
Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Լեռնագործների 18
press@zcmc.am

№37 • 2023թ.

1 ՀՈՒՆԻՍԻ
Երեխաների պաշտպանության միջազգային օր

Շնորհավոր Տոնդ, ՍԻՐԵԼԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ

ԶՊՄԿ ղեկավարությունը ջերմորեն շնորհավորում է բոլոր շրջանավարտներին գարնանային այս հրաշալի տոնի՝ Վերջին Զանգի կապակցությամբ, մաղթում նպատակների և երազանքների իրականացում:

Երիտասարդ բարեկամներ, դուք թևակոխում եք կյանքի մի նոր, առավել պատասխանատու փուլ, ոտք դնում խորհրդավորությամբ և անակնկալներով լի, հաջողություններ ու դժվարություններ տվող մեծ կյանքի ճանապարհին:

Դուք եք վաղվա ինժեներն ու բժիշկը, լեռնագործը և ուսուցիչը: Շարունակեք սովորել, դարձեք պահանջված մասնագետներ, ում կարիքը հիրավի, կա միշտ: Ձեր գիտելիքը, մասնագիտական հմտությունները, մարդկային որակները պետք է ծառայեն Հայաստանի Հանրապետության բարօրությանը:

Սիրելի շրջանավարտներ, հիշե՛ք, ձեզանից է կախված նաև երկրի վաղվա օրը: Ծատերը կգինվորագրվեն հայրենիքի պաշտպանությանը, որում՝ հաջողություն ենք մաղթում: Շնորհավո՛ր տոնդ, սիրելի բարեկամ, բարի երթ՝ նոր ճանապարհին:

Մարդկանց պես, մեխանիզմներն էլ իրենց լեզուն ունեն

Մանվել Հարությունյանը աշխատում է ԶՊՄԿ Հատուկ ծրագրերի բաժնում որպես էքսկավատորավար: Կոմբինատում է 2001 թվականից:

CAT 336 DL ME ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ ՆԵՐԱՌՈՒՄ ԵՆ

Շարժիչը	Cat C9
Շարժիչի հզոր.	220 կՎտ
Գործող քաշը	36400 կգ
Դույլի ծավալը	2.24 մ³
Փորելու խորություն	6570 մմ

– Սարդկանց պես, մեխանիզմներն էլ իրենց լեզուն ունեն, աշխատանքը 12 ժամյա է, որի ընթացքում անընդհատ էքսկավատորի հետ ես, նրանք էլ են վերաբերմունք և ուշադրություն ուզում, – պատմում է երկարամյա էքսկավատորավարը:

Մանվել Հակոբյանը շուրջ 22 տարի է՝ ինտեգրվել է ԶՊՄԿ բազմահազարանոց կոլեկտիվին: Ասում է, որ սկզբում լեռնային արտադրամասում 5 կմ³ շերեփի տարողությամբ էլեկտրական սնուցմամբ էքսկավատորի մեքենավարի օգնական էր: Տեխնիկայի արդիականացումը բերեց նրան, որ առաջ եկան նոր ու առավել արդյունավետ մեխանիզմներ, որոնք ավելի հեշտ էին կառավարվում, հարմարավետ էին ու արդյունավետ՝ աշխատանքի մեջ:

Լավ կոլեկտիվ ունենք, կարողանում ենք աշխատանքը առաջ տանել, և միմյանց հետ կայուն հարաբերություններ պահպանել:

«Աշխատանքն այստեղ է բերել շատերին» արտահայտությունը Մանվել Հարությունյանի ընտանիքի համար ևս, տեղին է ասված: Հայրը Քաջարան է եկել Գորիսից՝ աշխատանքի փնտրտուքով, եկել է և հաստատվել. կոմբինատում աշխատել է 42 երկար տարիներ:

Այդպես էլ Հարությունյանների երրորդ սերունդն է արդեն կոմբինատում աշխատում. Որդին՝ Սուրեն Հարությունյանը հոր հետ նույն բաժնում է:

Գնահատում եմ այն բարեկեցությունը, որ ոչ միայն աշխատակիցների ընտանիքներին, այլ ողջ մարզին կոմբինատն է տալիս, հպարտանում եմ լինել այս հսկա ընկերության մի աշխատակիցը:

Շնորհավորում եմ հոբելյանական 70 տարին և մաղթում, որ լինենք հավատարիմ ու պարտաճանաչ, ձևավորենք մեր հարմարավետ աշխատանքային միջավայրը և միասին կերտենք ԶՊՄԿ վաղվա օրը:

Լիլիթ Իսրայելյան
2023թ. մայիս

Մեր մասնագետները

ԶՊՄԿ ՓԲԸ ՀԱՏՈՒԿ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺԻՆ //
Անդրանիկ Գաբրիելյան

Արդեն 18 տարի է, ինչ Անդրանիկ Գաբրիելյանն աշխատում է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում, ավտոքարշակի վարորդ է:

– **Հիմնականում տեղափոխում ենք շարքից դուրս եկած տեխնիկան, սարքավորումները: Ջրցան մեքենաներ եմ վարել լեռնային արտադրամասում, ամբողջ աշխատանքային կենսագրությունս կապված է ավտովարորդի մասնագիտության հետ,** – պատմում է նա:

Ծնունդով Կապանից է, ասում է, որ համերաշխ ու երիտասարդ մասնագետներից կազմված աշխատանքային միջավայր ունեն, կարողանում են և՛ առօրյա հանձնարարականները կատարել, և՛ միմյանց հետ շփումը համատեղել:

– Մեր բարեկեցությունն ապահովված է մեր աշխատանքով, մնում է լինել բարեխիղճ, աշխատել ու օգտագործել հնարավորությունները՝ ի նպաստ երկրի, հայրենիքի – հավելում է նա:

Հատուկ ծրագրի բաժնի ղեկավար Սպարտակ Սողոմոնյանի բնութագրմամբ փորձառու և հմուտ վարպետ է, ով համեստորեն է պատմում իր աշխատանքի մասին և այնպես հեշտությամբ է կառավարում հսկա տեխնիկան, որ մտածում ես՝ մի՞թե հնարավոր է:

Լիլիթ Իսրայելյան
27.02.2023թ.

«Պայքար պոլիէթիլենային տոպրակների դեմ»

Հունիսի 5-ը Շրջակա միջավայրի պահպանության օրն է, որը ողջ աշխարհում տոնվում է արդեն 50 տարի: Այդ օրը նաև բնապահպանների մասնագիտական տոնն է: Օրվա կապակցությամբ բոլոր բնապահպաններին և ոչ միայն, շնորհավորանքի խոսք հղեց ընկերության բնապահպանության բաժնի պետ Հասմիկ Մկրտումյանը՝ նշելով, որ շրջակա միջավայրի պահպանությունը բոլորի պարտքն ու խնդիրն է՝ անկախ աշխատանքից ու գտնվելու վայրից:

Բնապահպանական կադրերն այս ոլորտում ինչ խոսք, անելիքներ շատ ունեն, մաղթում եմ մասնագիտական նորանոր ձեռքբերումներ բոլոր բնապահպաններին,– հավելեց նա,– **շրջակա միջավայրի պահպանությունը պետք է դառնա մեր արժեհամակարգի մի բաղկացուցիչ մաս:**

Այս տարի բնապահպանական բաժինը կարգախոս է ընտրել՝ «Պայքար պոլիէթիլենային տոպրակների դեմ» և այսօրվանից մեկնարկել են սեմինարները՝ ընկերության աշխատակիցների համար. Ինչպես տեսակավորել գրասենյակային աղբն ու ինչպես աստիճանաբար էկո մշակույթը բերել կենցաղ: Բոլոր մասնակիցներին բաժանվեցին նաև էկո պայուսակներ. դրանք կփոխարինեն պոլիէթիլենային տոպրակներին, նաև՝ հարմարավետ են և գեղեցիկ:

Ողջին առանց աղբի ու մոլախոտերի

Երեք տարի անց Ողջի գետը կրկին մաքրվում է Կապանով և Քաջարանով հոսող հատվածներում: Վերջին անգամ մաքրման աշխատանքներ էին իրականացվել 2020թ-ին, կրկին՝ «ԶՊՄԿ» ՓԲԸ ֆինանսական միջոցներով:

«44-օրյա պատերազմն ու քովիդի համավարակը այն ժամանակ պատճառ դարձան, որ աշխատանքները կիսատ մնան: Հենց այս պատճառով էլ Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը այս հարցով դիմեց «ԶՊՄԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլիին, որպեսզի մաքրվի Կապանի Հունան Ավետիսյան թաղամասից մինչև Գործարանային փողոց ընկած հատվածը: Ընտրվեց այս հատվածը, քանի որ առավել տեսանելի է ու աղտոտված գետը խաթարում է քաղաքի էսթետիկական տեսքը», – նշում է Կապան համայնքի ղեկավարի օգնական Միեր Ավետիսյանը:

Գետում աշխատելը բավականին բարդ է ու ժամանկատար: «ԶՊՄԿ» ՓԲԸ հատուկ ծրագրերի բաժնի աշխատակիցներն են հատուկ տեխնիկայով ու մասնագիտական մոտեցմամբ մաքրումն իրականացնում: Այս տարի էլ ֆինանսավորումը իր վրա է վերցրել կոմբինատը: Ընդհանուր առմամբ նախատեսվում է մաքրել գետի հունի 6600 մ տարածքը:

Աշխատանքները մեկնարկել են ս.թ. ապրիլի կեսից, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության համապատասխան թույլտվությամբ, իրականացնում են փուլերով: Մի հատվածի մաքրումն արդեն ավարտվել է:

Կոմբինատի բնապահպանության բաժնի ավագ մասնագետ Արծվին Ծատրյանի խոսքով՝ տարիների փորձառություն ունեն, գիտեն՝ ինչպես մաքրումն իրականացնել, որ ոչ գետի բուսական աշխարհը տուժի, ոչ էլ արդյունավետ աշխատանքը խաթարվի:

«Էքսկավատորով հեռացնում ենք միայն վերին՝ բերուկային շերտը, որպեսզի գետի ձկներին վնաս չհասցվի», – պարզաբանում է նա:

Ոչ տեղումնառատ ձմեռներից հետո գրեթե ջունգլիների վերածված գետում այս երեք տարում ինչ ասես չէր կուտակվել. կենցաղային աղբ, ծառերի արմատներ ու բերուկներ:

«Գետում աճած այս ծառերն ու թփուտները գոյանում են հատկապես վարարումների ժամանակ: Հողմահարության պատճառով հողի բարակ շերտի հետ գալիս են նաև բուսական սերմեր, ծառերի արմատներ ու ճյուղեր: Ջուրն էլ նպաստում է, որ մի քանի ամսում գետում արագորեն գոյանա բուսածածկ», – նշում է բնապահպանը:

ԶՊՄԿ-ն, որպես բարեխիղճ կազմակերպություն՝ իր ազդակիր համայնքներում իրականացնում է սոցիալական ու քաղաքաշինական տարբեր ծրագեր: Ազդակիր համայնքների ցանկացած խնդիր կոմբինատի առաջնահերթություններից է, իսկ գետի մաքրումը բնապահպանական կարևոր նախաձեռնություններից մեկն է:

«Մնում է հուսալ, որ բնակիչները կգնահատեն կատարված մեծածավալ աշխատանքը, սրտացավորեն կվերաբերեն ու ինչ պատահի չեն նետի գետի ջրի մեջ», – ընդգծում է ավագ մասնագետը:

Հերմինե Միքայելյան
Մայիս, 2023թ.

Ամեն ինչ արվում է, որ կիրառվի համաշխարհային լավագույն փորձը

ԶՊՄԿ-ում սեփականատիրական եւ ղեկավար կազմի փոփոխություններից հետո մի քանի անգամ ընկերության ղեկավարության կողմից հնչեցվել է այն պնդումը, որ բնապահպանական խնդիրները հնարավոր է լուծել, բայց դրա համար ժամանակ է անհրաժեշտ: Արդեն մեկ տարուց ավելի ժամանակ է անցել փոփոխություններից հետո, ու թեեւ «ժամանակ» ասելով, գուցե ԶՊՄԿ ղեկավարությունը ավելի երկար շրջան նկատի ուներ, այդուհանդերձ, եթե ինչ-որ միջոցառումներ ձեռնարկվում են, հավանաբար դրանք արդեն պետք է տեսանելի լինեն: Դիմեցինք ԶՊՄԿ այս հարցով, ինչին ի պատասխան, առաջարկեցին, որ հարցերին պատասխանի Բնապահպանական եւ աշխատանքի անվտանգության ղեկավար Տարոն Նավասարդյանը:

– Պարոն Նավասարդյան, մենք կցանկանայինք տեղեկանալ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի մոտեցումների մասին՝ կապված տարածաշրջանի բնապահպանական հիմնախնդիրների և բնապահպանական կայունության պահպանման հետ: Դա հատկապես կարևոր է, քանի որ վերջերս կառավարությունն ընդունել է հանքարդյունաբերական ոլորտի ռազմավարությունը, և ոլորտի ամենախոշոր ընկերությունը, փաստորեն, այդ ռազմավարության հիմնական շահառուն է ու պատասխանատուն:

– Հանքարդյունաբերության ոլորտում բնապահպանական խնդիրները իրոք ժամանակակից մարտահրավերներից են, իսկ առկա հիմնախնդիրների լուծման համար «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի կողմից ներդրվող ջանքերը՝ ոգևորող, քանի որ ընկերությունը հանդիսանում է Հայաստանում հանքարդյունաբերական ոլորտի լոկոմոտիվը, ինչպես արդյունաբերական ծավալներով, այնպես էլ վճարված հարկերով: Սակայն, հարկ է նաև նշել, որ ընկերությունը գործում է արդեն 70 տարի և իր վրա կրում է խորհրդային տարիների բնապահպանական մշակույթը, որն այսօր մեծ քայլերով փոխարինվում է ժամանակակից տեխնոլոգիաներով և բնապահպանական ու աշխատանքի անվտանգության արդի լուծումներով: Մենք ձգտում ենք շրջակա միջավայրի վրա ընկերության հնարավոր բնապահպանական ազդեցությունները բացահայտել, կառավարել և մեղմացնել, իրական հնարավորություն ստեղծելով դրանց հնարավոր մինիմալիզացման համար: Դրա վրա մենք ոչինչ չենք խնայում, ամեն ինչ արվում է որպեսզի առկա հիմնախնդիրների կառավարման համար կիրառվի հանքարդյունաբերական արդի նորարարությունները և համաշխարհային լավագույն փորձը:

– Այդ դեպքում, անդրադառնանք ըստ ոլորտների, մասնավորապես, ի՞նչ է արվում օրինակ ջրային ռեսուրսների վրա հանքի ազդեցությունը բացառելու ուղղությամբ: Ընդհանրապես դա հնարավո՞ր է:

– Ժամանակակից հանքարդյունաբերության մեջ գրեթե ամեն ինչ հնարավոր է: Մենք շարժվում ենք այդ ուղղությամբ: Ընկերությունը դիմել է և արդեն ունի հաստատված նոր ջրօգտագործման թույլտվություն, որը հնարավորություն է տալիս ավելի համակարգված և ճշգրիտ օգտագործել տարածաշրջանում մակերևութային ջրային ռեսուրսները՝ պահպանելով բոլոր էկոլոգիական նորմերը և անելով ամեն ինչ, որ չխաթարվի ջրային էկոհամակարգը: Այդ համատեքստում կարևոր է, որ նոր ջրօգտագործման թույլտվությունը համապատասխանի ինչպես ընկերության տոխնոլոգիական պահանջներին, այնպես էլ տարածաշրջանի էկոլոգիական հավասարակշռությանը: Դրան զուգահեռ ընկերությունը՝ համագործակցելով Կապանի տեղական ինքնակառավարման մարմինների հետ, իրականացնում է գետերի մաքրման աշխատանքներ: Գետերը մաքրվում են բնական գետաբերուկներից և տարբեր գործոնների հետևանքով առաջացած օրգանական և անօրգանական աղտոտումից: Սա մի ծրագիր է , որը նախատեսում է Ողջի գետի շուրջ 6600 մետր հատվածի մաքրում: Ընկերությունը նախատեսում է իրականացնել նմանօրինակ համագործակցություն նաև Քաջարան համայնքի հետ, որպեսզի հնարավոր լինի մաքրել Ողջի գետի այն հատվածը, որը գտնվում է Քաջարան համայնքի տարածքում:

Ընկերությունն Արծվանիկի պոչամբարի կայունության բարձրացման և վերահսկողությանը ուղված մի քանի խոշոր ծրագիր է իրականացնում, մասնավորապես՝ ուղղահայաց դրենաժային համակարգի նախագծումն ու մոնտաժումը:

– Հանքի պոչամբարի հնարավոր

Իրանցի գիտնականների այցը ԶՊՄԿ

Հավատարիմ մնալով թափանցիկ աշխատաոճին՝ ԶՊՄԿ-ն այս անգամ հյուրընկալեց ՀՀ-ում Իրանի գլխավոր հյուպատոսին, Սպահանի պետական և տեխնոլոգիական համալսարանների դասախոսական կազմին:

Անվտանգության պահպանման կանոններին ծանոթանալուց հետո հյուրերն ուղևորվեցին բաց հանք: Սյունիք եկած այցելուներին հետաքրքրում էին հանքարդյունաբերական հսկայի արտադրության ծավալը, հանքաքարում մետաղների պարունակությունը, հումքի մշակման տեխնոլոգիան և այլն: Հյուրերը տպավորված էին երկրի թիվ մեկ հարկատուի աշխատաոճից:

«Շնորհակալ ենք ԶՊՄԿ-ի ղեկավարությանը և ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղին մեզ հյուրընկալելու համար: Մենք ուսումնասիրում ենք հանքարդյունաբերության բնագավառում Իրանի և Հայաստանի նմանությունները, փորձում ընդհանուր եզրեր գտնել՝ գիտական համագործակցությունն ընդլայնելու համար: Այս հանքավայրի և Իրանի հատկապես կենտրոնական հանքավայրերի միջև նմանություններ ենք նկատում, բայց կփորձենք նաև տարբերություններ գտնել: Հուսամ՝ լավ արդյունքների կհասնենք երկու երկրների գիտական համագործակցությունը ավելի բարձր մակարդակի վրա դնելու համար», – նշեց Սպահանի պետական համալսարանի դասախոս, երկրաբան Մեյսամ Թադայուն:

ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղն էր կազմակերպել իրանցի գիտնականների այցը ԶՊՄԿ: 180-ից ավելի գործող հանքավայր ունեցող հարևան բարեկամական երկրում ոլորտի զարգացվածության մակարդակը բավականին բարձր է, և այդ առումով կողմերն ակնկալում են կրթական, գիտական, ինչու չէ նաև տնտեսական առումով համագործակցության ակտիվացում:

«Քանի որ նրանց մեջ կան տեխնոլոգներ և երկրաբաններ, ցանկություն հայտնեցին ծանոթանալու ԶՊՄԿ գործունեությանը՝ հավանաբար նպատակ ունենալով զուգահեռներ անցկացնել երկու երկրների միջև: Նրանք հանքարդյունաբերության ոլորտում մեծ տեղ են հատկացնում բնապահպանությանը և ցանկանում էին տեսնել, թե մենք ինչպես ենք վերաբերվում այդ հարցին», – մասնավորապես ասաց ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի ուսումնամեթոդական աշխատանքների և միջազգային համագործակցության գծով տնօրենի տեղակալ Տիմեյա Աղամյանը:

Բացահանքի դիտակետից հետո իրանցի հյուրերի հաջորդ կանգառն ընկերության հանքաքարի ջարդման և տեղափոխման արտադրամասն էր: Այստեղ ձեռնարկության բացահանքի բարձման տեղամասի պետը մանրամասն բացատրեց հանքաքարի ջարդման մեխանիզմը: Երկրաբանները դատարկաձեռն դուրս չեկան հանքի տարածքից. նրանք մի քանի կտոր քար վերցրին՝ ուսումնասիրություն անելու համար: Իրանական բուհերի դասախոսները տպավորված էին այցելությունից:

Արմինե Հարությունյան

ազդեցությունը նույնպես հիմնականում կարող է կրել Ողջի գետը: Հնարավոր է արդյո՞ք նման ազդեցությունը չեզոքացնել:

– Անշուշտ, հնարավոր է եւ արվում է: Պոչամբարը հատուկ խնամք և հատուկ ուշադրություն է պահանջում՝ ռիսկերի կառավարման առումով: Ընկերությունն Արծվանիկի պոչամբարի կայունության բարձրացման և վերահսկողությանը ուղված մի քանի խոշոր ծրագիր է իրականացնում, մասնավորապես՝ ուղղահայաց դրենաժային համակարգի նախագծումն ու մոնտաժումը: Կարևոր եմ համարում հատուկ ընդգծել մի նոր ծրագիր, որն ուղղված է պոչամբարի սեյսմիկ կայունության գործակցի բարձրացմանը: Դա ավտոմատ ռեժիմով աշխատող էլեկտրոնային սեյսմիկ համակարգ է, որը մշտապես տեղեկատվություն է տրամադրում պոչամբարի պատվարի հնարավոր սեյսմիկ ռիսկերի վերաբերյալ: Սա կարևորագույն հարց է, մեր տարածաշրջանում պարտադիր անհրաժեշտություն է մշտական հսկողության տակ պահել պոչամբարի սեյսմիկ զգայունությունը՝ տարբեր սեյսմիկ ռիսկերի նկատմամբ:

– Ինչպե՞ս է դա աշխատելու:

– Պոչամբարում տեղադրվելու են սեյսմիկ զգայուն ընկալիչներ, որոնք առցանց ռեժիմով մշտապես տեղեկություն են փոխանցելու երկրաշարժերի և ցանկացած սեյսմիկ շարժի վերաբերյալ: Սա շատ կարևոր ծրագիր է, և ուզում եմ հատուկ հպարտությամբ ընդգծել, որ Հայաստանի հանքարդյունաբերական ոլորտում սա առաջին նմանատիպ ծրագիրն է, որը կարող է էականորեն բարձրացնել պոչամբարի կայունությունը ու հուսալիությունը: Համակարգի ներդրման համար պայմանագրային աշխատանքներն արդեն ավարտման փուլում են, և իրականացվում են զուգահեռ ուսումնասիրություններ՝ սարքավորումների տեղադրման ճշգրիտ տեղադիրքերի որոշման համար: Կիրառվում է ճապոնիայի փորձը, սարքավորումները իտալական են, դրանք տեղադրելու են տեղացի մասնագետները, որոնք միջազգային տարբեր հարթակներում բավարար փորձառություն են ձեռք բերել: Մեծ հույս ունեմ, որ մինչև տարեվերջ համակարգը կգործարկվի:

Հարցազրույցն ամբողջական՝ «Փաստ» թերթի 01.06.2023թ. համարում

Թթխմորով հացը՝ քաջարանյան ապրանքանիշ

Այս օրերում դժվար է զարմացնել ինչ-որ մեկին բազմազբաղությամբ: Սակայն երբեմն հանդիպում ես այնպիսի մարդկանց, ում հագեցած օրակարգը և գործին նվիրումը օրինակելի է: Քաջարանցի Արփինե Ավետիսյանը հենց այդպիսիներից է, մասնագիտությամբ ինժեներ, երկար տարիներ է արդեն աշխատում է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում, սակայն ամեն հերթափոխից հետո աշխատանքի է անցնում իր տան փոքրիկ խոհանոցում: Քաջարանյան ապրանքանիշ դարձած թթխմորով հացը՝ նրա

ստեղծագործությունն է:
Փոքր քաղաքում, այն էլ մայրաքաղաքից հեռու, սկսնակ գործարար Արփինեն շատ խնդիրների է բախվում, երկու տարվա ընթացքում դրանք շրջանցելու հնարքներ է գտել:
«Տարեկանի ալյուր գտնելը շատ բարդ էր, մայրաքաղաքում եմ գտել այն: Ամբողջահատիկ լավ ալյուր գտնելը էլ ավելի բարդ էր, Գյումրիում եմ գտել և մինչ օրս այնտեղից եմ պատվիրում, ինչպես նաև կանաչ հնդկաձավարի ամբողջահատիկ ալյուրը», – պատմում է նա:
Ֆրանսիական բատոն, իտալական չիաբատտա, պիտա, տարտին, բորոդինյան հաց, ֆրանսիական բրիոշ և բանանաբրեդ դեսերտային հացեր: Այս ամենը, ինչպես նաև մեկ տասնյակ տեսակի հացեր հայտնի են ոչ միայն Քաջարանում, Արփինեն հաճախորդներ ունի նույնիսկ Վանաձորում: Հարազատ քաղաքի հետ մեծ հույսեր է կապում հացթուխը, թխարան՝ որտեղից հնարավորություն կունենան օգտվելու բոլորը, այն նպատակն է, որը ստիպում է շարունակել և զարգացնել գործը:
Թթխմորով հացի աշխարհը անեզր է, ասում է հացթուխը, հաճախորդին առաջարկվող 20 տեսակները դեռ սկիզբ են, առաջիկայում նոր համադրություններ և տեսակներ է խոստանում Արփինեն, որպեսզի գոհացնի ներկայիս հաճախորդներին և գրավի նորերին:

Անի Գրիգորյան
Մայիս, 2023թ.

Ուշադրության կենտրոնում կրկին երեխաներն են, նրանց կրթությունն ու զարգացումը

Զանգեզուրի պղնձամոլիբդենայինը՝ մարզում կրթական ծրագրերի աջակցության շրջանակում ակտիվ համագործակցում է համայնքի կրթական օջախների հետ և ապահովում բազմաթիվ մրցույթ – փառատոներին՝ շնորհալի երեխաների մասնակցությունը:

Ընկերության Կայուն զարգացման տնօրեն Արմեն Ստեփանյանի հյուրերն այս անգամ՝ Սեդա և Անահիտ Մելիքյան քույրերն էին: Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում կայացած «Փարիզի աստղեր» վարկանիշային մրցույթ-փառատոնին նրանք ներկայացրել են հայկական քանոնն ու ուդը և վերադարձել՝ պատվավոր առաջին հորիզոնական զբաղեցրած: Երեխաների համար սա առաջին արտասահմանյան մրցույթն էր, տպավորությունները շատ են. փայլող աչքերով աղջնակները թվարկում են հրաշք քաղաքի տեսարժան վայրերն ու կիսվում զգացողություններով: Ամենակարևորը՝ վստահ են էլի տարբեր երկրներ են մեկնելու մրցույթների, քանզի արդեն իսկ հրավերներ են ստացել: Պատրաստ են աշխատել անդադար, առավել վսհատության և հմտության համար:

Քաջարանի մշակույթի պալատի «Նռանե» պարային համույթի սան Սառա Ստեփանյանը / գեղ. ղեկավար՝ Մելանյա Մարտիրոսյան/ Փարիզի բեմում ներկայացրել է «Հարսնացուն Զանգեզուրից» պարը: Գեղ. ղեկավարն ընդգծում է նման մրցույթներին մասնակցության կարևորությունը՝ թե նոր շփումների, թե փորձությունների և թե հմտանալու կապակցությամբ: Դասատու Նաիրա Բաբայանն ու արվեստի դպրոցի տնօրեն Արմինե Թումանյանը շնորհակալություն հայտնեցին ընկերության կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյանին՝ մշտապես շնորհալի երեխաների կողքին գտնվելու, աջակցելու համար:

Լիլիթ Իսրայելյան
Մայիս, 2023 թ.

Փարիզում կայացած «Փարիզի աստղեր» վարկանիշային մրցույթ-փառատոնից Սեդա և Անահիտ Մելիքյան քույրերն զբաղեցրել են առաջին հորիզոնականը:







Թվային իրականությունն ու ժամանակակից երեխան

Հունիսի 1-ը երեխաների պաշտպանության միջազգային օրն է: Այն հանդիսավոր նշվում է աշխարհի գրեթե բոլոր երկրներում. կազմակերպվում են տոնական, երեխաների համար տրամադրություն ստեղծող միջոցառումներ:

Տոնը խորհրդանիշ ունի. Կանաչ դրոշի ֆոնին պատկերված են 5 մարդուկներ, որոնք ասոցացնում են բոլոր ռասաների և ժողովուրդների միասնությունը: Իսկ երկիրը, որի շուրջ մարդուկներն են, բոլորիս ընդհանուր տունն է՝ Երկիր Մոլորակը: Ներդրումներ, ժամանակ և ռեսուրսներ շատ են պետք, որպեսզի երեխաները լինեն առողջ, ստանան կրթություն և ձևավորվեն որպես ուժեղ անհատներ, հասարակությանը պիտանի մարդիկ: Մեր երեխաների մասին խոսելիս հաճախ ասում ենք՝ նրանք մեր երջանկությունն են, մեր հույսն ու հավատը, մե՛ր և երկրի՛ ապագան: Ինչ և ինչպես սովորեցնել ժամանակակից երեխային, ինչով գրավել նրա ուշադրությունը՝ արագ փոփոխվող այս աշխարհում:
Ռուս և խորհրդային գիտնական, նյարդակենսաբան, հոգեբան, փիլիսոփայական և կենսաբանական գիտությունների դոկտոր Տատյանա Չերնիգովսկայան միանշանակ խորհուրդ է տալիս փոքր տարիքից երեխային սովորեցնել ամեն ինչ. երաժշտություն, մաթեմատիկա, պար, նկարչություն: Դա մի պարզ բացատրություն ունի. ընտրության համար դու պետք է մի ողջ ներկապնակ ունենաս, ծանոթ լինես ամենատարբեր ոլորտներին, որպեսզի կարողանաս ասել՝ «Սա սիրում եմ, իսկ այ մյուսը՝ ատում»:
Եվ կրթություն տվողը միանաշանակ պետք է լինի մարդը, արհեստական բանականությունն այստեղ անելիք չունի, որքան էլ շատ լինեն ժամանակակից կրթական առցանց ծրագրերը: Քանզի մարդը կարող է իր օրինակով վարակիչ լինել, հետաքրքրություն առաջացնել, մեկ բառով՝ զգացմունքայնություն դրսևորել:
Այստեղ արդեն գիտնականը կարևոր է համարում շեշտել՝ երեխաներին պետք է կրթեն մանկավարժության «Աստղերը», այլ ոչ նրանք, ովքեր պատահաբար

են հայտնվել ոլորտում:
Մեկ բառով՝ ԲՈՒՀ-երը պետք է պատրաստեն ուրիշ ուսուցիչների, ովքեր կարող են և ունակ՝ ժամանակակից երեխային, ով ամեն բան ստանում է համացանցից գերարագությամբ, հետաքրքրությամբ բերել դպրոց: Դա աշխարհի մասշտաբով մանկավարժների պատրաստման մեթոդիկայի հեղափոխություն է ենթադրում: Այ հենց կախված ուսուցչից՝ երեխան կամ միանգամից ատում է գիտելիքն ու ուսումնական պրոցեսը, կամ՝ հակառակը: Արդյունաբերական Քաջարան համայնքը 4 նախակրթարաններ ունի, որոնցից երկուսը կոմբինատի կառուցվածքային մասն են կազմում, մյուս երկուսը՝ համայնքային ենթակայության տակ են: 2023թ. տվյալներով կոմբինատի նախակրթարան է հաճախում 140 երեխա, իսկ համայնքային՝ 119: Այս տարի բոլոր չորս նախակրթարաններից դպրոց կհաճախի 70 երեխա: Երեխայի համար առաջին լուրջ և ինտեգրման համար կարևոր միջավայր են հանդիսանում նախակրթարանները: Կարևոր են նաև՝ ծնող – մանկապարտեզ – երեխա փոխհարաբերությունները: Նախակրթարանի կարգ ու կանոնով մեծացած երեխան հետագայում հեշտ է ինտեգրվում այլ՝ մասնավորապես դպրոցական միջավայրին, հիմնականում պարտաճանաչ վարքագիծ է դրսևորում: Հետաքրքրություն – ահա կարևոր հանգամանքը, որով կարևոր ենք վարակել այսօր երեխային: Եթե նրան հետաքրքիր է՝ նա կանի մաքսիմալ հաճույքով, պատասխանատվությամբ և ստիպված չի լինի ծնողը՝ ամենօրյա ռեժիմով խստագույնս հետևել դասապատրաստմանը: Իրականում մարդկությունն այսօր քաղաքակրթության մի նոր, բարդ ու խուճուճ փուլ է վերապրում, ինչի հետ հաշվի նստելը պարտադիր է: Թե ուր այն կտանի դեռևս անհայտ է, սակայն մի բան հաստատ է՝ մեր ապագայի հենասյունն ամուր պահելու համար ուղղակի պարտավոր ենք ազնվորեն բացահայտել մեր երեխաների ուժեղ և թույլ կողմերը, օգնել նրանց և տարբեր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու կարողություն զարգացնել:

Ռուս և խորհրդային գիտնական, նյարդակենսաբան, հոգեբան, փիլիսոփայական և կենսաբանական գիտությունների դոկտոր Տատյանա Չերնիգովսկայան միանշանակ խորհուրդ է տալիս փոքր տարիքից երեխային սովորեցնել ամեն ինչ. Երաժշտություն, մաթեմատիկա, պար, նկարչություն:

Լիլիթ Իսրայելյան
ք. Քաջարան, 20.05.2023թ.

Կոմբինատի երախտավորները՝ Համլետ Ոսկանյան

Հատված՝ Սոս Դավթյանի «Հանքաշխարհի լեգենդը» տպագրվող գրքից

Ձեռնարկության բազմահազարանոց կոլեկտիվում կարևոր դերակատարություն է ունեցել նաև Ոսկանյանների աշխատավորական գերդաստանը, որի ավագ կամ երիտասարդ սերունդների ներկայացուցիչները տասնամյակներ շարունակ արարել և արարում են կոմբինատում, իրենց ծանրակշիռ ներդրում ունենում Գանձասարի ասքի կերտման գործում:

Գերդաստանի հիմնադիրը ցարական բանակի սպա Մանվել Տեր-Մարգարյանն է, ով զորացրվելուց հետո վերադառնալով Ղափան աշխատանքի է անցնում Կավարտի պղնձահանքերում:

1936 թվականին հանքախորշում տեղի ունեցած արտադրական վթարի՝ փլուզման հետևանքով ստացած վնասվածքներից վախճանվել է հիվանդանոցում:

Բազմաճյուղ գերդաստանի արմատները հինավուրց Քաջարանց գյուղից են: Հանքավայրին անմիջապես հարևանող գյուղի բնակիչները, այդ թվում նաև նրանք, հիմնականում լավատեղյակ էին Գանձասարի աշխատանքային առօրյային, և բնականաբար, որոշակի պատկերացում ունեին լեռնային գործի մասին:

Գերդաստանը տվել է բազմաթիվ երախտավորներ, ղեկավար թե շարքային, պատասխանատու պաշտոններ զբաղեցրած շատ աշխատողներ, ԽՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ, կոմբինատի դիրեկտոր, արտադրամասերի պետեր, ինժեներներ, տեխնիկական գիտությունների թեկնածուներ, շարքային աշխատողներ, ովքեր էական ավանդ են ներդրել ձեռնարկության առաջընթացի և զարգացման մեջ:

Առավել հայտնի են կոմբինատի դիրեկտոր Համլետ Ոսկանյանը, ԽՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ Արկադիա Ոսկանյանը, լեռնային արտադրամասի պետ Մարտուն Ոսկանյանը, հարստացուցիչ ֆաբրիկայի պետ Մանվել Ոսկանյանը, շինարարական արտադրամասի պետ Արմեն Ոսկանյանը, քիմիական լաբորատորիայի պետ Արման Ոսկանյանը:

Համլետ Ոսկանյանը աշխատանքային գործունեությունը Քաջարանում սկսել է 1956 թվականին, աշխատանքի ընդունվելով «գրոմովյան» արշավախմբում, որը Հայաստանի տարածքում զբաղված էր ուրանի պաշարների որոնումով:

Այնուհետև աշխատանքի է անցել Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատում որպես տեխնոլոգիական ավտոհավաքակայանի պետ, ապա զբաղեցրել արտադրադիսպետչերական բաժնի և լեռնային արտադրամասի պետերի պաշտոնները:

1965 թվականին նշանակվել է Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր ինժեներ: Կոմբինատի դիրեկտոր, փորձառու լեռնագործ Սաբիր Ստեփանյանի հետ միասնական ջանքերով կարողացավ հաղթահարել խոչընդոտները, ձեռնարկությունը հանել ծանր կացությունից, և այն շուտով սկսեց աշխատել արդյունավետ, կատարել պլանային բոլոր առաջադրանքները:

1968 թվականի Քաջարանի երկրաշարժը ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակ ստեղծեց տարածաշրջանում, առանձնապես լեռնագործների ոստանում:

ՀԿԿ կենտկոմի որոշմամբ Քաջարանում ստեղծվեց երկրաշարժի հետևանքների վերացման հատուկ վարչություն, որի ղեկավար նշանակվեց Համլետ Ոսկանյանը, ով շտապ կարգով հետ կանչվեց Ագարակից և անմիջապես ձեռնամուխ եղավ նոր պարտականությունների կատարմանը:

1969 թվականին կենսաթոշակի անցավ կոմբինատի գլխավոր ինժեներ Մարգար Բաղլաուխովը, ով ավելի քան տասը տարի հաջողությամբ զբաղեցրել էր այդ պատասխանատու պաշտոնը: Նրան փոխարինեց Համլետ Ոսկանյանը, ով ԽՍՀՄ գունավոր մետալուրգիայի մինիստր Պյոտր Լոմակոյի հրամանով նշանակվեց Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր ինժեներ, իսկ 1975 թվականին՝ կոմբինատի դիրեկտոր, պաշտոնավարելով շուրջ հինգ տարի՝ մինչև 1979 թվականի վերջը:

Դրանք կոմբինատում նկատելի առաջընթացի տարիներ էին: Քաջարանի կոմբինատին միացվեց լրավճարով աշխատող Ղափանի պղնձահանքային կոմբինատը: Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ նորաստեղծ միացյալ ձեռնարկությունում կառուցվածքային փոփոխություններ, կադրային մի շարք նոր նշանակումներ իրականացվեցին, բարձրացվեց աշխատանքային ու կատարողական կարգապահությունը, և շատ չանցած՝ երևացին առաջին դրական արդյունքները:

1977 թվականին հանդիսավորությամբ նշվեց կոմբինատի գործարկման 25-ամյակը: Դրան ընդառաջ անհամեմատ ավելացան



Կոմբինատի կուսկոմիտեի քարտուղար Կարեն Մկրտչյանը, (ձախից), դիրեկտոր Համլետ Ոսկանյանը և գլխավոր ինժեներ Բորիկ Մկրտչյանն արտադրական շրջայցի ժամանակ

ձեռնարկության արտադրական հզորությունները, վերազինվեց հարստացուցիչ ֆաբրիկան, հատկապես ֆլոտացիոն բաժանմունքը: Գործարկվեցին «ՄԲ-70,23», «ՄՄՑ 70,23» ինքնամանրացման երկու գնդիկավոր աղացներ, խցիկի 16 խորանարդ մետր տարողությամբ նոր պնևմատիկ-մեխանիկական ֆլոտամեքենաներ:

Քայլեր ձեռնարկվեցին նաև նոր տեխնոլոգիաների ներդրման, ֆերրոմոլիբդենի արտադրության կազմակերպման ուղղությամբ: Արդեն պատրաստ էր արտադրամասի նախագիծը, որը պետք է կառուցվեր Արծվանիկի պոչամբարի մերձակայքում:

Կոմբինատի արտադրական տեղամասերի արդիականացման մեծամասշտաբ ծրագրերից բացի պատշաճ ուշադրություն էր դարձվում նաև սոցիալական նախագծերին: Կոմբինատի դիրեկտորի հրամանով կազմակերպված իրականացվում էր լեռնագործների հանգիստն առողջարանում: Ավտոբուսներն աշխատանքային օրվա վերջին հանգստացողներին տեղափոխում էին պրոֆիլակտորիում, որտեղից հաջորդ առավոտյան՝ կրկին տանում աշխատանքի: Կառուցվեց նոր պիոներական ճամբար, որտեղ ամառային արձակուրդներին հանգստանում էին հարյուրավոր երեխաներ:

Միաժամանակ կոմբինատի ընդլայնման հետ մեկտեղ սկսեց կենսագործվել աշխատանքի վետերաններին Ղափան քաղաքում բնակարան հատկացնելու ծրագիրը, որն ունեցավ սոցիալ-տնտեսական կարևոր նշանակություն:

Շրջկենտրոնում սկսվեց շինարարական աննախադեպ վերելք, հաջորդաբար շարք մտան բնակելի նոր շենքեր, թաղամասեր, կառուցվեցին հյուրանոց, կուլտուրայի պալատ, նախատեսվում էր շահագործման հանձնել քաղաքը շրջանցող ավտոճանապարհ, բեռնատար ավտոտրանսպորտը հանել Ղափանի կենտրոնից՝ բեռնաթափելով այն:

Դա Քաջարանի բնակչության տեղափոխման ծրագրի առաջին էտապն էր: Արդեն պատրաստ էր Աչաղու և Շղարշիկ բնակավայրերի վարչական տարածքում նոր քաղաքի կառուցման 80 միլիոն ռուբլի արժողությամբ նախագիծը, համաձայն որի կառուցվելիք քաղաքը հիմնականում կազմված կլիներ առանձնատներից, իսկ Ղափանի հետ այն կմիանար տրոլեյբուսային կապով: Դա օրվա հրամայականն էր: Ծովի մակերևույթից 1800 մետր բարձրության վրա գտնվող Քաջարան քաղաքը բնակության համար չուներ բարենպաստ պայմաններ, ինչը հիմնականում պայմանավորված էր տեղանքի առանձնահատկություններով, բնակլիմայական դժվարին պայմաններով, նաև կոմբինատի արտադրական գործունեությամբ:

1979 թվականի վերջերին Համլետ Ոսկանյանն ազատվեց կոմբինատի դիրեկտորի պաշտոնից և միայն ամիսներ հետո նշանակվեց Զոդի ոսկու հանքի դիրեկտոր: 1983-1986 թվականներին վարեց Ղափանի լեռնահանքային կոմբինատի գլխավոր ինժեների պաշտոնը, իսկ 1986 թվականին նշանակվեց Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի դիրեկտորի սոցիալական հարցերով տեղակալ և աշխատեց մինչև 1992 թվականը՝ կենսաթոշակի անցնելը:

Համլետ Ոսկանյանի աշխատանքը բարձր է գնահատվել ժամանակակիցների և երկրի ղեկավարության կողմից, արժանացել համարժեք մեծարանքի: Անվանի լեռնագործը, արտադրության բազմափորձ հրամանատարը պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի», երկու անգամ «Պատվո նշան» շքանշաններով, տարբեր մեդալներով:

Նրա ղեկավարման տարիներին ձեռնարկությունը բազմիցս արժանացել է փոխանցիկ դրոշների, բազմաթիվ խրախուսական մրցանակների, կոմբինատի անունը գրվել է ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսի «Պատվո տախտակ»-ին, ինչը դիտվում էր լուրջ նվաճում:



ԴԱՐՁՐԵՔ ՁԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ԱՆՎՏԱՆԳ

Պաշտպանիչ արտահագուստ

- Բոլոր աշխատակիցներից, կապալառուներից և այցելուներից պահանջվում է ցանկացած միջավայրում (շինարարական հարթակներ/տեղամասեր, պահեստներ և այլն) կրել պաշտպանիչ արտահագուստ կամ անդրադարձնող ժիլետ, եթե աշխատակցի կյանքին և առողջությանը վտանգ է սպառնում կամ առկա է անվտանգության նշանի ցուցում:
- Այն պետք է լինի բարձրորակ, համապատասխանի առաջադրանքների կատարմանը, լինի լավ և մաքուր վիճակում, առանց պատռված կամ վնասված մասերի:
- Պտտվող մասեր ունեցող մեխանիզմների հետ (հորատման հաստոցները, հղկող սարքեր) աշխատելիս մեքենավարի արտահագուստը պետք է լինի կոճկված և համապատասխանի իր չափսերին՝ պտտվող սարքավորումների հետ աշխատելիս հնարավոր վտանգներից խուսափելու համար:
- Անձնակազմի արտահագուստի արտաքին մասը պետք է ունենա «բացարձակ տեսանելի» լուսանդրադարձնող ժապավեններ՝ ISO/TC 94 ստանդարտին համաձայն:
- Ընկերության տարածքներում անհրաժեշտ է կրել տաբատ:
- Էլեկտրականության հետ աշխատող անձինք (էլեկտրիկներ, էլ. փականագործներ) պետք է կրեն էլեկտրահարումից և այրվածքներից պաշտպանող դիէլեկտրիկ բոտի/արտահագուստ:
- Ջրի նմուշարկում իրականացնելիս պետք է կրել անջրաթափանց արտահագուստ կամ տաբատ, ինչպես նաև փրկարարական ժիլետ: